Հավելված 2

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի

2021 թվականի տարեկան հաշվետվության

## Միջոցառումներ
## Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

| Հ/Հ | Միջոցառում | | Ակնկալվող արդյունք | Կատարող (համակատարող) ստորաբաժանում | Ժամկետ | Կատարողական |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | |
| 1. | Աշխատողներից անանուն բողոքների ստացման employeeprotect համակարգի գործարկում | Մամուլի հաղորդագրություն Տեսանյութ | 1) Համակարգի ներդրման նպատակի վերաբերյալ իրազեկում | ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ | 01.07.2021 | Համակարգի գործարկման հետ կապված իրականացվել են՝<br>1. տեղեկատվական, վիճակագրական տվյալների ներբեռնում համակարգ,<br>2. այլ պետական գերատեսչությունների կողմից ստացված առաջարկությունների քննարկումներ<br>3. համակարգը գործարկվել է, և աշխատանքային իրավունքի խախտումների հետ կապված ստացվել է 34 դիմում-բողոք: |
| | | | 2) Աշխատողի աշխատանքային իրավունքի պաշտպանության նոր մեխանիզմի | | | |

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | վերաբերյալ իրազեկում, որը հնարավորություն կընձեռի բացահայտել ներքին խնդիրները, դժգոհությունները և առաջարկները, որոնք աշխատանքային պրակտիկայում կարող են խոչընդոտ հանդիսանալ | | | |
| 2. | Աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի գործարկում /ՄԱԿ/ | Էլեկտրոնային համակարգի ներդրման օրենսդրական կարգավորումների իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում<br>Անձնակազմի ուսուցում<br>Վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում էլեկտրոնային համակարգի կիրառություն | Վերահսկողության գործիքակազմի կատարելագործում և արդյունավետության բարձրացում | ԱՕՎՎ<br>ԻԱՓՎ | 30.12.2021 | Մասնակցություն «Հայաստանում աշխատանքային իրավունքների վերահսկման էլեկտրոնային հարթակի» ստեղծման աշխատաժողովին, որում ներկայացվել է Հարթակի ստեղծման նպատակը, հիմնական նշանակությունը և գործառույթները, քննարկվել են տեխնիկական բնութագրի նախնական տարբերակը:<br>Սեպտեմբերին Գրասենյակ առաջարկություն է ներկայացվել աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակի ներդրման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումների կատարելու վերաբերյալ, համաձայն որի՝ ՀՀ-ում աշխատանքային պայմանագրերի կնքման էլեկտրոնային հարթակը պետական կառավարման մարմիններում պարտադիր կլինի 2023 թվականի հուլիսից, իսկ ոչ պետական մարմինների համար՝ 2025թ-ից: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի ներդրմամբ պայմանավորված ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխանող տիպային պայմանագրերի, անհատական իրավական ակտերի տիպային օրինակելի ձևաթղթերի կազմում և ներդրում | Վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում էլեկտրոնային համակարգի կիրառություն | 1) Աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության ապահովում<br>2) վերահսկողության թիրախավորում | ՌԳՍՊՎՎ<br>ԱՕՎՎ | 30.12.2021 | Աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի ներդրմամբ պայմանավորված կազմվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխանող տիպային աշխատանքային պայմանագրերի, աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտերի տիպային օրինակելի ձևաթղթեր:<br>Գործընթացը շարունակվում է հաշվի առնելով նաև ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1902-L որոշման 1-ին հավելվածի Միեր Գրիգորյանի գրասենյակին վերապահված միջոցառումների 11-րդ կետը: |
| 4. | 1.1. Միջազգային կառույցների հետ համագործակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (IALI) անդամակցության ուղղությամբ գործողությունների իրականացում<br>ԱՊՀ անդամ երկրների և Մոնղոլիայի տարածաշրջանային դաշինքի (РАИТ СНГ и Монголии, RALI) տարեկան ծրագրով նախատեսված | Աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի պահպանման և ապահովման օրենսդրության կատարելագործում, Աշխատանքային իրավունքների, այդ թվում առողջ և անվտանգ | ԱՕՎՎ<br>ԻԱՓՎ | 01.01.2021-31.12.2021 | Նախաձեռնվել է գործընթաց՝ Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցացիայի (IALI) անդամակցության ուղղությամբ, մասնավորապես Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի լիիրավ (IALI) անդամ (ձայնի իրավունք) դառնալու նպատակով հայտեր են ներկայացվել:<br>Ապահովվել է ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված ճանապարհային քարտեզի իրագործման աշխատանքներին մասնակցությունը: |


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքների իրականացում | աշխատանքային պայմանների իրավունքի ապահովման վիճակի բարելավում, Տեսչական մարմնի գործունեության ապահովում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան | | | Քննարկվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ «Միասին աջակցենք Հայաստանում իրավունքների պաշտպանությանը» ծրագրի շրջանակներում ԱԱՏՄ-ի կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների ներդրման հնարավորությունները:<br>Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) ու Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հետ համատեղ անցկացվել է առցանց միջոցառում՝ նվիրված աշխատանքի պաշտպանությանը:<br>Մասնակցություն աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի (IALI) նախաձեռնությամբ կայացած «Covid-19 և հետևանքները աշխատանքի տեսչությունների գործունեության ոլորտում» թեմայով վեբինարին:<br>Կայացել է ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի համաժողովը:<br>Իրականացվել է աշխատանքային տեսուչների վերապատրաստման կարիքների գնահատման հարցաթերթիկների լրացում և դրանց տրամադրում Աշխատանքի միջազգային կազմակերպությանը (ԱՄԿ): |
| | | ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված օրենսդրության կատարելագործման, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների և աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման, ճանապարհային քարտեզի իրագործման աշխատանքներին մասնակցություն | | | | |
| | | Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ, ILO) հետ համագործակցության իրականացում օրենսդրության | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | կատարելագործման, ԱՄԿ ստանդարտների կիրառման ապահովման, աշխատանքի վերահսկողության տեսուչների վերապատրաստումների և փորձի փոխանակման բնագավառներում | | | | Դեկտեմբերի 21-ին կայացել է ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի գլխավոր համաժողովը՝ ԱԱՏՄ նախագահությամբ: Համաժողովին Դաշինքի և ԱՄԿ Մոսկովյան բյուրոյի հետ ստորագրվել է համագործակցության Հռչակագիր, ընդունվել է Դաշինքի մասնակից երկրների միջև միգրանտ աշխատողների աշխատանքային հարցերով փոխգործակցության միասնական կարգը սահմանելու վերաբերյալ Հուշագիր, տեղի է ունեցել 2022 թվականի նախագահության ընտրություն, ապահովվել է թվով 2 իրավական ակտերի մշակման ընթացքը: |
| | 1.2. Համագործակցել այլ երկրների Տեսչական մարմինների հետ իրականացնելով փորձի փոխանակում | Հանդիպումներ, քննարկումներ, սեմինարներ՝ տարբեր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ | Աշխատանքի արդյունավետության բարձրացում | ԱԱՏՄ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 01.01.2021-31.12.2021 | ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքային տեսչությունների տարածաշրջանային դաշինքի շրջանակներում կատարվել է մասնակից երկրների վերահսկողական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն և ամփոփում, փորձի փոխանակում: |



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Ջրօգտագործման թույլտվություն տրամադրող լիազոր մարմնի հետ համատեղ ջրագծերի, ջրօգտագործողների և ջրօգտագործման նպատակների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում | Օրենսդրական հիմքերի ուսումնասիրություն<br>Լիազոր մարմնի հետ համապատասխան քննարկումների իրականացում | Խմելու ջրի որակի նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացում, վերահսկողության իրականացման դյուրացում, նոր գործիքակազմերի և վարույթների իրականացման նոր մոտեցումների ներդնում | ՀՍՀՎՎ ԻԱՓՎ | 30.05.2021 01.07.2021 | «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է խմելու ջրում մնացորդային քլորի ցուցանիշների հսկման էլեկտրոնային համակարգի տեղադրում: Տեսչական մարմնի կողմից առաջարկվել է վերջինս հասանելի դարձնել նաև Տեսչական մարմնին: |
| 6. | Լայնաֆորմատ համագործակցություն աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտներում գործունեություն իրականացնող ՀԿ-ների հետ, վերջիններիս ռեսուրսները խնդիրների վերհանման, հասարակական իրազեկվածության բարձրացման և այլ | Ոլորտներում գործունեություն իրականացնող ՀԿ-ների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում<br>Համագործակցության առաջարկների ներկայացում Ներդրում և իրազեկում | Խնդիրների վերհանում և դրանց լուծման ընդհանուր մոտեցումների ներդրում, Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացում | ԻԽՀՏԱԲ<br>ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ | մայիս-հունիս | ԱԱՏՄ-ն «Օքսֆէմ» հիմնադրամի և Տեղեկատվական և Հաղորդակցության Տեխնոլոգիաների Գործատուների Միության հետ ստորագրել է հուշագրեր՝ Հայաստանում աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտի քաղաքականությունների բարելավման ուղղությամբ  անհրաժեշտ համագործակցություն ապահովելու նպատակով: Հուշագրով նախատեսվել են իրականացնել համատեղ հանրային իրազեկման քարոզարշավներ, ծավալել մասնակցային երկխոսություն, տրամադրել իրավախորհրդատվություն և կարողությունների զարգացում անհատներին, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նպատակներով օգտագործելու համար | | | | | աշխատանքային կոլեկտիվներին և արհմիություններին իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանության վերաբերյալ, ինչպես նաև աջակցել աշխատանքային իրավունքների պաշտպանությանը՝ ստեղծելով ՏՀՏ լուծումներ ՀՀ-ում աշխատանքային իրավունքների վերահսկողության ոլորտում: <br> Մասնակցություն «ՕքսԵՋեն» հիմնադրամի կողմից համակարգվող «Քաղաքացու ձայն և նախաձեռնություն» ցանցի նախաձեռնած աշխատանքային իրավունքների պաշտպանության թեմայով հանդիպմանը: <br> «Սոցիոսկոպ» հասարակական հետազոտությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ-ին Տեսչական մարմնի լիազորությունների և գործառույթների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: <br> ԱՄՆ պետքարտուղարության մարդու իրավունքների, նաև կրոնական ազատությունների մասին 2021թ.-ի ամենամյա զեկույցների պատրաստման համար տեղեկատվության տրամադրում: |
| 7. | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ գործընկերային հարաբերություններին ուղղված ծրագրերի մշակում, իրականացում | Հնարավոր ուղղությունների քննարկում | ՄԻՊ-ի կողմից արձանագրվող խնդիրներին ԱԱՏՄ-ի կողմից իր իրավասության սահմաններում անհապաղ | ԱԱՏՄ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ | 02.08.2021 | Առանձին ծրագրեր չեն մշակվել, սակայն ապահովվում է մշտական համագործակցությունը. ՄԻՊ-ից պարբերաբար ստացվում է առանձին խնդիրների մասին տեղեկատվություն, որոնց ընթացք է տրվում և ընթացքի մասին հետադարձ տեղեկացվում: |
| | | Երկկողմ համաձայնության առկայության դեպքում | | | 16.08.2021 | |
| | | | | | 20.08.2021 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | համագործակցության ձևաչափի մշակում | արձանագրման հնարավորության ստեղծում, խախտումների կանխարգելում: | ԻԱՓՎ | | |
| 8. | ԱԱՏՄ-ի աշխատակիցների վերապատրաստում (ըստ ոլորտների) արտերկրում կամ օտարերկրյա կազմակերպությունների կողմից՝ ՀՀ-ում | Վերապատրաստման ոլորտների և թեմաների ընտրություն | Տեսչական մարմնի կադրային որակի բարձրացում, իրազեկվածություն միջազգային նոր ստանդարտներին և դրանց կիրառում | ԱԱՏՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ | 01.01.2021-31.12.2021 | Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչության մասնագետները հոկտեմբերի 27-28-ին մասնակցել են «Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր համակարգի ներդրում (EIDSS)» թեմայով վերապատրաստման դասընթացին: Դասընթացը կայացել է Տեսչական մարմնի և «Bleack & Veatch» կազմակերպության, «Bleack & Veatch»-ի հատուկ նախագծերի կորպորացիայի, «EIDSS & PACS» ընկերության հետ համագործակցության շրջանակներում:<br><br>Հոկտեմբեր ամսին «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի և ԱԱՏՄ-ի միջև ստորագրվել է համագործակցության մասին հուշագիր, որով նախատեսվել է իրականացնել ԱԱՏՄ աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսուչների վերապատրաստումներ պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ենթադրյալ դեպքերի հայտնաբերման և գնահատման, ինչպես նաև |
| | | Վերապատրաստման ենթակա աշխատակիցների ցանկի կազմում | | ԻԽՀՏԱԲ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման ու հզորացման կապակցությամբ: Կազմվել և ուղարկվել է վերապատրաստման ենթակա աշխատակիցների ցանկը, և դեկտեմբեր ամսին Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով ներդրվել է տեսուչների համար մշակված «Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչները ՀՀ-ում» ուղեցույցը: Պատրաստվում է վերապատրաստման մոդուլը: |
| 9. | Սեմինար ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար՝ լուսաբանման ձևաչափով | ԱԱՏՄ վերահսկողական գործառույթների և դրանց արդյունքի ներկայացում | ՁԼՄ-ների հետ գործակցության ամրապնդում, ԱԱՏՄ գործառույթների վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում | ԻԽՀՏԱԲ | 01.03.2021-30.04.2021 | Կազմակերպվել է սեմինար 4-րդ եռամսյակում:<br><br>Մասնակցություն «Աշխատանքային իրավունքների պաշտպանության հիմնահարցերը Հայաստանում և լուսաբանման առանձնահատկությունները» խորագրով սեմինարին, որին ՁԼՄ ներկայացուցիչներին է ներկայացվել աշխատանքային օրենսդրության՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումների վերլուծությունը, ներկայացվել է Տեսչական մարմնի լիազորությունների և դրանց իրականացման գործիքակազմի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, անցկացվել է բովանդակալից քննարկում:<br>Մասնակցություն «Արմենպրես» մամուլի ասուլիսին՝ աշխատանքային իրավունքի ոլորտում Տեսչական մարմնին նոր |


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | լիազորությունների վերապահման թեմայով, ՁԼՄ-ների հետ անցկացվել են հարցազրույցներ: ՁԼՄ-ներով հրապարակվել են տեսչական մարմնին վերապահված լիազորությունների և իրականացվող աշխատանքների վերաբերյալ հարցազրույցներ, ինչպես նաև հարուցված վարչական վարույթների ընթացքը լուսաբանող տեսահոլովակներ՝ շինարարական հրապարակներում իրականացվող վերահսկողական աշխատանքների, և իրավական վերահսկողության աշխատանքների վերաբերյալ: |
| 10. | Մարդկանց թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, ներառյալ երեխաների թրաֆիքինգի և շահագործման, հարկադիր աշխատանքի առանձնահատկություններ, ինչպես նաև օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ սեմինար-քննարկում | Իրազեկման նյութի պատրաստում և հրապարակում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրերից բխող իրազեկում՝ որպես խնդրի կանխարգելիչ քայլ ԱՍՏՄ կողմից | ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ ԻԱՓՎ | 01.01.2021-31.12.2021 | Օգոստոսի 2-ին մասնակցություն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման իրազեկման և կանխարգելման» տեղեկատվական արշավի մեկնարկի ազդարարման միջոցառմանը: Սեպտեմբերի 6-10-ը մասնակցություն GRETA-ի (Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ) երրորդ փուլի գնահատման այցին Հայաստան, որի ընթացքում կողմերը անդրադարձել են 2016-2021թթ-ին՝ ԵԽ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիայի իրականացման շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտականությունների կատարման |
| | | Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | ՀՀ-ում 2020-2022 թ.թ. մարդկանց թրագիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով և ծրագրի իրականացման | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացում | | | ընթացքին, առկա խնդիրներին և դրանց լուծման հնարավոր ուղիներին:<br>Ստորագրվել է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի և ԱԱՏՄ համագործակցության մասին հուշագիր, որով նախատեսվում է խթանել պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ենթադրյալ դեպքերի հայտնաբերման ու գնահատման մասով ԱԱՏՄ-ի ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացումը, աջակցել հարկադիր աշխատանքի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործմանը և ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրմանն ու հզորացմանը:<br>Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 15 ուսանողների հետ արտադրական պրակտիկայի ընթացքում անցկացվել է մեկամսյա դասընթաց՝ թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ:<br>Մասնակցություն մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի նիստին, որում ամփոփվել է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման իրազեկման և կանխարգելման» արշավի ընթացում |
| | | Շահագրգիռ մարմինների, կազմակերպություններ, դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցություն | Իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում մինչև 18 տարեկան աշխատողների | | | |
| | | Իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց հետ սեմինարների, դասընթացների միջոցով | Թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում մինչև 18 տարեկան անձանց | | | |
| | | Աշխատանքային տեսուչների վերապատրաստումներ և փորձի փոխանակման իրականացում | Աշխատանքային իրավունքի, այդ թվում՝ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | խախտումների կանխարգելում | | | իրականացված աշխատանքները և ներկայացվել են «Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի մշտադիտարկման համակարգերի հզորացում» ծրագիրը և «Թրաֆիքինգի դեմ պայքարի իրավիճակային պատկերն ու ազգային արձագանքը Հայաստանում» զեկույցը: Հարցազրույցի անցկացում Հայաստանի հանրային ռադիոյի հետ հետևյալ թեմայով՝ ի՞նչ քայլեր են արվում Հայաստանում և ի՞նչ քայլեր է իրականացնում Տեսչական մարմինը թրաֆիքինգի հետ կապված խնդիրներին լուծում տալու նպատակով: |
| 11. | Ստուգումների և վարչական վարույթների իրականացման էլեկտրոնային ծրագրի ներդրում և ապահովում՝ կիրառվող վերահսկողության ստուգաթերթերի թվայնացում | Ստուգումների իրականացման ժամանակ ծրագրի փործարկում | Վերահսկողության գործընթացի կանխատեսելիության և թափանցիկության ապահովում | ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br><br>ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ | 01.01.2021-31.12.2021 | Ծրագրի առաջին փուլն ավարտելու համար ներդրդրվել է համապատասխան Բազա և Բազայի ներդրման աշխատանքները կրում են շարունակական բնույթ: |
| | Բազայի ներդրում | | | ՌԳՍՊՎՎ | | |



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 12. | Ոլորտային ստուգաթերթերի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Ստուգաթերթի նախագծերի մշակում դեռևս ստուգաթերթեր չունեցող տնտեսական գործունեության տեսակների համար | Թեմատիկ ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացում | ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br><br>ՏԿ | ըստ առաջնահերթության | Հաստատվել է 2 ստուգաթերթ.<br>- Ստուգաթերթ N 4.2՝ մշակող արդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողություն,<br>- Ստուգաթերթ N 3.16՝ Գովազդի թույլտվության նորմերի նվազագույն պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն<br><br>Մշակվել և Գրասենյակ է ներկայացվել<br>- «Շինարարություն (ՏԳՏԴ՝ F) ոլորտում, «Կոպճահանքերի և ավազահանքերի շահագործում, կավի և ճենակավի (կաոլինի) արդյունահանում» (ՏԳՏԴ՝ B08.12) ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողության Ստուգաթերթ N 4.3-ը:<br>- Ստուգաթերթ N 3.10-ը՝ «18 տարեկանից բարձր անձանց արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն մեծահասակների և խառը տիպի պոլիկլինիկայում»: |


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Գրասենյակ է ներկայացվել աշխատանքային իրավունքի բնագավառում ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթի նախագիծը: |
| 13. | Համաձայն պայմանավորվածության՝ ԱԱՏՄ մասով Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող ԹԱԻԵՔՍ ծրագրի մեկնարկում և իրականացում | Օրակարգի սահմանում և հաստատում<br>Անհրաժեշտ նյութերի նախապատրաստում | Նոր վերահսկողական մեխանիզմների ներդրում, վերահսկողական աշխատանքների բարեկարգում, միջազգային փորձին համապատասխանեցում | ԴՇՎՎ<br>ԻԱՓՎ | 30.09.2021 | Կայացել է COVID-19-ի հետ կապված իրավիճակի վերաբերյալ առցանց աշխատաժողով: Ներկայացվել է ԱԱՏՄ-ի կողմից COVID-19-ի կանխարգելմանն ուղղված գործողությունները, օրենսդրությունը, ԵՄ գործընկերներն իրենց հերթին ներկայացրել են Դանիայում և Ավստրիայում COVID-19-ի կանխարգելման ուղղությամբ տեսչական մարմինների կողմից իրականացվող աշխատանքները: |
| 14. | Դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության օպերատիվ ստացման ապահովում | Տեղեկատվության օպերատիվ ստացման հնարավորություններ ի ուսումնասիրում<br>Առաջարկությունների ներկայացում<br>Օրենսդրության մշակում<br>Տեղեկատվության ստացում և հավաքագրում և ԱՕՎՎ տրամադրում | 1) Աշխատանքի վայրում տեղի ունեցած արտադրական դժբախտ դեպքերի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության ստացում<br>2) վերահսկողության թիրախավորում | ԱՕՎՎ<br>ՌԳՍՊՎՎ | 30.12.2021 | Դժբախտ դեպքերի և(կամ) մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած աշխատողների վերաբերյալ հավաքագրվել է քանակական տեղեկատվություն ըստ մահվան, հաշմանդամության և ոչ հաշմանդամության ելքերի: Վերահսկողության թիրախավորման հետ կապված՝ ռիսկի տեսանկյունից 2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի վերահսկողության հինգ ոլորտներում նախատեսվում է իրականացնել 700 ստուգում՝ 647 տնտեսավարող սուբյեկտի մոտ:<br>Աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | աշխատողների վերաբերյալ ոստիկանությունից ստացվում են առկա տեղեկատվությունները, որոնք ճշտվում են տեսուչների կողմից ստուգումների և վարչական վարույթների ժամանակ: |

# ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

| Հ/Հ | Միջոցառում | | Ակնկալվող արդյունք | Կատարող (համակատարող) ստորաբաժանում | Ժամկետ /ամիս, տարի/ | Կատարողական |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | Նախագիծը մշակվել և ներկայացվել է Գրասենյակ:<br><br>«Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ առաջարկվել է նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից, որը սույն թվականի օգոստոսի 27-ի թիվ ԱԱ/22.1/18309-2021 գրությամբ ներկայացվել է |
| 1. | «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների | Նախագծի մշակում | ՀՀ-ում չգրանցված կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ ներմուծված դեղեր պահպանելու, ինչպես նաև դեղատների առևտրի սրահներում, | ԻԱՓՎ<br>ԴՇՎՎ | 26.02.2021 | |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | | 05.03.2021 | |
| | | Նախագծի լրամշակում ըստ անհրաժեշտության | | | 12.03.2021 | |
| | | Նախագծի վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների | | | 19.03.2021 | |


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համակարգման գրասենյակ | համակարգման գրասենյակ ներկայացում | սպասասրահներում պիտանիության ժամկետն անցած դեղեր պահելու արարքների համար օրենսդրական արգելք սահմանող վարքագծի կանոնի նախատեսում, համապատասխանաբար նշված արարքների համար վարչական պատասխանատվության միջոցների կիրառման իրավական հնարավորության առկայություն, «Դեղի փաթեթ» եզրույթի վերաբերյալ միասնական մոտեցման մշակում և օրենսդրական ամրագրում» | | | Տեսչական մարմին, 02.09.2021թ.-ի թիվ 01/11989 - 2021 գրությամբ Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է դիրքորշում, որտեղ ներառվել է նաև ՀՀ ԱԱՏՄ 2021 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում արդեն իսկ ներկայացված նախագծերը, այս թվում «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին:<br>2021 թվականի նոյեմբերի 09-ին վերոգրյալ նախագծի վերաբերյալ աշխատանքային կարգով կարծիք է ներկայացվել նաև Գրասենյակ, վերջնական ընթացքն ապահովելու նպատակով: |
| 2. | «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում ՀՀ | Նախագծի մշակում | Իրականացված վարչական վարույթի ընթացքում հայտնաբերված իրավախախտումների դեպքում հայտնաբերման պահից մինչև | ԻԱՓՎ | 01.02.2021 | Նախագիծը մշակվել և ներկայացվել է Գրասենյակ: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկը ներկայացվել է |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | | 08.02.2021 | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | | 13.02.2021 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | | վարչական տույժ կիրառելու երկամսյա ժամկետի նախատեսում | | | «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին առաջարկի հետ միասին, ընթացքը նույնն է: |
| | | Նախագիծը վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում | | | 15.02.2021 | |
| 3. | «Դեղերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Նախագծի մշակում | 1) ԱԱՏՄ-ի կողմից դեղերի շրջանառության վերահսկողության իրականացման կանոնակարգում<br>2) ԱԱՏՄ-ի կողմից դեղերի հետևանքի իրականացման գործընթացի սահմանում<br>3) ԱԱՏՄ-ի կողմից դեղատոմսով բաց թողնվող դեղերի շրջանառության վերահսկողության իրականացման ուժեղացում | ԴՇՎՎ | 12.03.2021 | Նախագիծը մշակվել և ներկայացվել է Գրասենյակ Նախագիծը ներկայացվել է և ընթացքը ապահովվել ու քննարկումներն իրականացվել են Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին առաջարկի հետ միասին |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ԱԱՏՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ | 02.04.2021 | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԴՇՎՎ<br>ԻԱՓՎ | 01.05.2021 | |
| | | Նախագիծը վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում | | ԴՇՎՎ<br>ԻԱՓՎ | 07.06.2021 | |
| 4. | ԱԱՏՄ կողմից իրականացվող | Նախագծի մշակում | Տնտեսավարող սուբյեկտներին դեղերի | ԴՇՎՎ | 25.02.2021 | Կարգը հաստատվել է ԱԱՏՄ-ի ղեկավարի 2021 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վարչական վարույթներով կամ ստուգումներով պայմանավորված լաբորատոր փորձաքննությունների ժամանակ օգտագործված, ինչպես նաև չօգտագործված դեղերի քանակների վերադարձման կարգի սահմանում | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում<br>Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում<br>Նախագծի ներկայացում և հաստատում | վերադարձման գործընթացների կարգավորում | | | թվականի մարտի 02-ի թիվ 122-Ա հրամանով: |
| 5. | Դեղատոմսով բաց թողնվող դեղերի շրջանառությունը ավտոմատ համակարգերով կարգավորելու վերաբերյալ առաջարկության ներկայացում համապատասխան գերատեսչություններին | Նախագծի մշակում<br>Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում<br>Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում<br>Նախագծի ներկայացում և հաստատում | Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերահսկողության ուժեղացում | ԴՇՎՎ | 01.07.2021<br>12.07.2021<br>19.07.2021<br>01.08.2021 | Միջոցառումը հետաձգվել է, քանի որ ԱՆ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ էլեկտրոնային դեղատոմսի ներդրման վերջնաժամկետը նախատեսվել է 2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակը: |
| 6. | Լիազոր մարմին առաջարկի ներկայացում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից թափոնների ոչնչացման տվյալների | Նախագծի մշակում<br>Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում<br>Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | Դեղերի թափոնների նկատմամբ վերահսկողական աշխատանքների պարզեցում | ԴՇՎՎ | 02.02.2021 | 2021 թվականի փետրվարի 26-ի թիվ 01/1543-2021 գրությամբ Գրասենյակ է ներկայացվել առաջարկ՝ միանական էլեկտրոնային համակարգ ստեղծելու վերաբերյալ, բանավոր |


ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | էլեկտրոնային հասանելության ապահովման վերաբերյալ | Նախագծի ներկայացում և հաստատում | | | | տեղեկատվության համաձայն այն քննարկման է ներկայացվել համապատասխան գերատեսչությանը: |
| 7. | ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 164-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայցում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Նախագծի մշակում | ԱԱՏՄ-ի կողմից դեղերի հետևանքի իրականացման գործընթացի սահմանում, դեղատներում բժշկական թափոնների նկատմամբ վերահսկողության սահմանում | ԴՇՎՎ | 12.07.2021 | Նախագիծը մշակվել և ներկայացվել է Գրասենյակ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից եղել է առաջարկ՝ համատեղ քննարկում իրականացնելու և վերջնական նախագիծ մշակելու համար: Սույն թվականի նոյեմբերի 04-ին Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակում կազմակերպվել է համատեղ քննարկում, որի ընթացքում պարզ է դարձել, որ Փորձագիտական կենտրոնը նույնպես նախաձեռնում է փոփոխության նախագիծ, որով հնարավոր է կատարվեն հետևանքի ընթացքի համակարգային փոփոխություններ, նախագծի ներկայացումից հետո նախատեսվում է լրացուցիչ քննարկում կազմակերպել: |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ՏԿ | 19.07.2021 | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԻԱՓՎ ԴՇՎՎ | 01.08.2021 | |
| | | Նախագիծը վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում | | ԻԱՓՎ ԴՇՎՎ | 01.08.2021 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | ՀՀ կառավարության 2010 թվականի N 17-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Առաջարկությունների ներկայացում | Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման նկատմամբ վերահսկողության սահմանում, այդ թվում՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ ում | ԴՇՎՎ | 02.11.2021 | Նախագիծը մշակվել և ներկայացվել է Գրասենյակ |
| | | Նախագծի մշակում | | ԴՇՎՎ | 09.11.2021 | |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | ՏԿ | 18.11.2021 | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | ԻԱՓՎ | 25.11.2021 | |
| | | Նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում | | ԻԱՓՎ | 30.11.2021 | |
| 9. | «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի և/կամ հարկային ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի փոփոխության նախագծի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների | Նախագծի մշակում | Դեղերի շրջանառության ոլորտում հարկային գաղտնիք ստանալու հնարավորություն | ԴՇՎՎ ԻԱՓՎ | 01.02.2021 | ՊԵԿ-ի, ԱԱՏՄ-ի և ԱՆ-ի աշխատակիցների միջև կազմակերպվել և իրականացվել է համատեղ քննարկում: Նշված միջոցառումը կատարելու նպատակով մշակվել է ««Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ներկայացվել Գրասենյակ: |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | | 12.02.2021 | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | | 19.02.2021 | |
| | | Նախագիծը վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում | | | 26.02.2021 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համակարգման գրասենյակ | | | | | |
| 10 | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | Նախագծի մշակում | Տեսչական մարմիններին օրենքով վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման համար արդյունավետ, իրավական ակտերի («Դեղերի մասին» օրենք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք) նպատակներից, խնդիրներից բխող գործիքակազմի ներդրում, վարչական վարույթի մասնակիցների լսված լինելու սահմանադրական իրավունքի իրացման նպատակով վարույթի առավելագույն ժամկետի երկարաձգման օրենսդրական հնարավորության ստեղծում, վարույթի | ԻԱՓՎ | 15.01.2021 | Նախագիծը մշակվել և ներկայացվել է Գրասենյակ: |
| | | Նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում | | | 22.01.2021 | |
| | | Նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում | | | 29.01.2021 | |
